ՄՈՌԱՑԻԱԾ ԽՕՍՔԵՐ

(ԿՈՄՍ Լ. ՏՈԼՍՏՈՅԻ ՄՏՔԵՐԸ)

Ե. ՂԱԶԱՐԵԱՆՑԻ

I

Մեր ժամանակի ամենամեծ ռուս գրողը, որի նշանաւոր Крейцерова Соната վէպը այնքան աղմուկ և խօսակցութիւն բարձրացրեց թէ ռուսաց մամուլի և թէ հասարակութեան մէջ, վերջին անգամ հրատարակեց էլի մի նշանաւոր յօդուած, որ դարձեալ շատ խօսակցութեան և մտածողութեան նիւթ տուեց մամուլին։ Իմ խնդիրը՝ Լ. Տոլստոյի „Для чего люди одурманиваются"?. վերնագրով փիլիսոփայական գրուածքի մասին է։ Ռուսաց ազատամիտ մամուլը՝ երկար ժամանակ բողոքելով Տոլստոյի բռնած «վարդապետական» ուղղութեան դէմ, վերջ ի վերջոյ եկաւ այն եզրակացութեանը, որ ինչքան էլ միակողմանի և տարօրինակ մտքեր լայանէ հանճարեղ արուեստագէտ-վիպասանը, ինչքան էլ սխալ լինին նորա կարծիքները՝ գիտութեան և ալժմեան քաղաքակրթութեան մասին, դարձեալ նորա հրապարակախօսական գործունէութիւնը մեծ օգուտ է տալիս ռուս հասարակութեանը և մամուլին՝ թէկուզ միակ այն բանով, որ Տոլստոյ «զարթեցնում» և քննութեան առարկայ է դարձնում շատ խորը բարոյական և փիլիսոփայական հարցեր... Տոլստոյի նման մի այլ ականաւոր տաղանդ— Շչէդրին, իւր մահուանից առաջ՝ փչեցրեց ռուս հասարակութեանը մի քանի «մոռացուած խօսքեր» (забытыя слова), որոնք են՝ ճշմարտութիւն, սէր, առաքինութիւն, հայրենասիրութիւն և այլն։ Ի հարկէ Շչէդրին բոլորովին այլ կերպ էր նայում այդ բարոյական հասկացողութիւնների վերայ, քան թէ Տոլստոյ, բայց հետաքրքիրը այն է, որ այդ երկու ռուս հսկաներն էլ՝ հաւասարաչափ ոյժով և տաղանդով՝ հարկաւոր են համարում՝ միևնոյն ժամանակի և միևնոյն պայմանների մէջ, լիշեցնել մարդկութեանը, որ աշխարհիս երեսին սէր կայ, ճշմարտութիւն կայ, խիղճ

կայ, մարդասիրութիւն, հայրենասիրութիւն և այլ բարձր զաղափարներ կան, որոնք մոռացած են այժմ, որոնք առ ոչինչ են համարւում՝ այժմեան գրական և հաշուպէտ դարում։ Այս հանգամանքը ամենից հետաքրքիր և բնորոշ է թէ մեր ժամանակի և թէ այդ երկու մեծ մարդոց վերաբերութեամբ։ Եւ ճշմարիտ. ինչ է նշանակում այս, որ մարդկութեան ամենաընտիր զաւակները, դանազան հանգամանքներից օգուտ քաղելով՝ անդադար աշխատում են բարձրաձայն քարոզել՝ ճշմարտութիւն, սէր, խիղճ, ազնուութիւն, առաքինութիւն... Ինչ է նշանակում այս։ Մթթէ այդ մտքերը վաղուց քարոզուած, վերջացած չեն մարդկութեան համար, մթթէ այժմեան քաղաքակրթուած կուլտուրական Եւրոպան կարո՞ղ է այդ տեսակ քարոզութիւնների,—այն Եւրոպան, որի գիտութեան և տեխնիկայի զարգացումը հրաշքներ է կատարում մարդոց առաջ։ Այն ինչ Տոլստոյ՝ դարձեալ շարունակում է իւր քարոզութիւնները, դարձեալ և դարձեալ աշխատում է լիշեցնել մարդկութեանը և իւր հայրենակիցներին, որ այդ գիտութիւնը, այդ տեխնիկան, այդ աշխարհանդէսները և աշտարակները (Էյֆէլեան) ոչինչ են, ոչինչ՝ համեմատելով այն մեծ չարիքի հետ, որ տիրում է կեանքի մէջ, և այդ չարիքը այն է. որ չը կայ սէր, չը կայ մարդասիրութիւն, չը կայ խիղճ, որոնք ազնուացնում, բարձրացնում և իսկական գեղեցկութիւն են տալիս մարդոց կեանքին։

Տոլստոյի, Շչէդրինի նման խոշոր անձնաւորութիւնները, որոնց վիշտը և ուրախութիւնը, մտքերը և տանջանքները՝ բոլորովին դուրս են իրանց անձնական, նեղ աշխարհի սահմանից, որոնք իրանց մէջ ամփոփում են միլիոնաւոր մարդոց պիտոյքները և հոգսերը,—այդ տեսակ ընդհանուրի կեանքով ապրող մարդիկ՝ մի մի կատարեալ ծանրաչափ կարող են համարւել՝ մարդկային ազգի բարելաւութեան և երջանկութեան աստիճանը չափելու համար։ Նրանց բողոքը հաւասար է միլիոնաւոր ամբոխի բողոքին, նրանց ուրախութիւնը, վիշտը, ցանկութիւնները և լոյսերը, արտայայտում են նոյն միլիոնաւոր բազմութեան պահանջները, կարիքը, վիշտը...

Եւ ինչպէս որ ծանրաչափի բարձրանալով, կամ իջնելով, դուշակւում է ապագայ եղանակը, այնպէս էլ՝ այդ մեծ մարդոց զգայուն սիրտը գուշակում, նախատեսում է մարդկութեան ապագան, վաղորդ տանջւում, կամ ուրախանում է այդ ապագայի տեսարանով։ Ահա այս է պատճառը, որ չը նայելով Լ. Տոլստոյի քարոզութեան ակներև մոլորութիւններին, չը նայելով այն բազմաթիւ հերքումներին և ընդդիմախօսութիւններին, որ ամեն կողմից թափւում են Տոլստոյի վերայ՝ թէ Ռուսաստանի և թէ նոյն իսկ արտասահմանեան գրողների կողմից՝—դարձեալ նոյն իսկ վիճողները, նոյն իսկ նորա մտքերի և գաղափարների դէմ սաստիկ բողոքողները՝ չեն կարողանում արտասանել Տոլստոյի անունը՝ առանց խորը, ներքին երկիւղածութեան և պատկառանքի։

Տոլստոյի հանճարը, նորա բարոյական խոր զգացմունքները և մտքերը,

նորա հոգեկան տանջանքները, որ առաջ են գալիս ժողովրդի, ամբոխի ցաւերը մօտիկ դիտելուց և հասկանալուց — այս ամէնը ներշնչում են մարդու՝ ակամայ պատկառանք «ակամայ սէր և երկիւղածութիւն» դէպի նա... Կարելի է չը համաձայնել Տոլստոյի հետ, կարելի է վիճել, բողոքել նորա մտքերի դէմ՝ բայց չի կարելի անտարբեր մնալ դէպի նա, չի կարելի հոգեպէս չենթարկուել նորա բարոյական ոյժի ազդեցութեանը։ Եւ այդ բարոյական ոյժը ոչ այլ ինչ է, եթէ ոչ նորա ընդունակութիւնը՝ հասկանալ ամբոխի ցաւերը, զգալ իւր ամբողջ հոգու զօրութեամբ՝ միլիօնաւոր բազմութեան առօրեայ պէտքերը և թշուառութիւնը։ Եւ եթէ Տօլստոյ իւր այդ բոլոր հոգեկան և բարոյական ոյժերով հանդերձ՝ չի դադարում «սէր», «եղբայրութիւն», «խիղճ» քարոզել, եթէ նորա յուսահատութիւնը այն աստիճան է հասնում, որ նա, յանուն բարձր քրիստոնէական սկզբունքների՝ սկսում է հերքել այժմեան գիտութեան և քաղաքակրթութեան տուած պտուղները („плоды просвѣщенія“)—այդ նշանակում է, որ իրաւ, մեր ժամանակի մարդիկ չափազանց մոռացել են իրանց խիղճը, չափազանց ոտնակոխ են անում իրանց եղբայրսիրական և մարդասիրական պարտականութիւնները։ Այդ միենոյնը վկայեց և Շչէդրին, վերջացնելով մարդոց՝ իւր նշանաւոր «Մոռացուած խօսքերը...» „Праворовались людишки, остатки совѣсти потеряли“—ահա թէ ինչ էր գրում Շչէդրին՝ իւր կեանքի վերջին տարիներում։ Ընկնելով «խղճի» ետևից, ամեն կերպ աշխատելով մարդոց մէջ խիղճ զարթեցնել՝ Տոլստոյ վերջապէս տեսնում է, որ միայն քարոզութիւնով չի կարելի զարթեցնել մարդոց խիղճը,—և նա սկսում է մտածել այն բնական պատճառների վրայ, որոնք խլացրել, համարեա ոչնչացրել են մարդոց մէջ՝ խղճի աստուածային ձայնը...

Նա մտածում, մտածում և վերջապէս գալիս է այն եզրակացութեանը որ մարդկային խղճի ամենամեծ թշնամիները. այն առօրեայ, տարածուած սովորութիւններն են, որ մենք անուանում ենք՝ ծխել և հարբել, կամ խմել։ Ոգեւորուած իւր այս նոր մտքով՝ թէ նա գտել է խղճի մեռցնող, խլացնող պատճառները՝ Տոլստոյ սկսում է գրել այդ իւր միտքը. սկսում է ապացուցանել, որ ծխախոտը, գինին, արաղը, գարեջուրը, խաշխաշը, օպիումը, եթերը, մորֆիումը և այլ քնեցնող, թմրեցնող, կամ թէ գրգռող նիւթերը. միակ և գլխաւոր պատճառներն են, որ քնացնում, թմրեցնում են մարդոց խիղճը... Իւր այս միտքը Տոլստոյ ամփոփեց մի յօդուածի մէջ, որի վերնագիրն է. „Для чего люди одурманиваются?“։ Ես կաշխատեմ ծանօթացնել հայ ընթերցողին այդ գրուածքի գլխաւոր կէտերի հետ։

II

Պէտք է ամենից առաջ նկատել, որ Տոլստոյի բոլոր վարդապետական-փիլիսոփայական գրուածքները չունին գիտական բնաւորութիւն, թէև

ինքը չատ անգամ այդ «տոնով» է գրում. նորա բոլոր մտքերը և եզրակացութիւնները հիմնուած են՝ իւր սեփական փորձերի և դիտողութիւնների վրայ, բոլորովին անկախ որ և է ուրիշ գիտնական, կամ փիլիսոփայական ուղղութիւնից։ Նոյն եղանակով և նոյն ուղղութիւնով գրած է նաև մեզ հետաքրքրող չարադրութիւնը։ Որովհետև ամբողջ յօդուածը գրած է խղճի մասին, խղճի արթուն լինելու, կամ խլանալու, մեռնելու մասին, ուստի Տոլստոյ նախ մի հոգեբանական որոշում է տալիս թէ՝ ինչ բան է խիղճը։ «Գիտակցական կեանքի ժամանակ»—ասում է նա—«մարդ կարող է երկու տարբեր էակներ նշմարել իւր մէջ. մէկը—կոյր, զգայական, միւսը—տեսնող, դիտող, հոգեկան։ Կոյր, կենդանական էակը՝ ուտում, խմում, հանգստանում, քնում, բազմանում և շարժւում է, ճիշտ այնպէս, ինչպէս որ շարժւում է՝ լարուած մեքենան։ Տեսնող, հոգեկան էակը, որ կապած է կենդանականի հետ, ինքը ոչինչ չի անում, այլ միայն դնահատում, քննում է կենդանական էակի գործունէութիւնը, ներդաշնակւում, միանում է նորա հետ, երբ հանում է նորա գործունէութեանը,—բաժանւում, զատւում է նրանից՝ երբ չի հաւանում նորա գործունէութեանը»։ Ահա այդ տեսնող, դիտող հոգեկան էակին՝ Տոլստոյ անւանում է խիղճ։ Սա նման է մի կողմնացոյցի, որի սլաքը մի ծայրով ցոյց է տալիս դէպի բարին, միւս ծայրով՝ դէպի չարը։ Երբ մարդու մէջ կենդանական, կոյր գործողութիւնները հաւանութիւն են գտնում խղճի կողմից՝ այն ժամանակ խղճի սլաքը ուղիղ և անվրդով կանգնած է լինում. այդ նշանակում է, որ մարդու խիղճը և գործերը ներդաշնակ են, համաձայն են իրար հետ։ Իսկ երբ կենդանական էակի գործունէութեան ընթացքը դուրս է գալիս խղճի ցոյց տուած ճանապարհից, այն ժամանակ խղճի սլաքը սկսում է վրդովուել, դուրս է գալիս իւր խաղաղ դրութիւնից, բաժանւում, զատւում է այն ճանապարհից, որով սկսել է գնալ կոյր, անասնական էակը,—և այստեղ սկսում է մարդու մէջ այն սոսկալի գործողութիւնը, որ կոչւում է խղճի խայթոց, խղճի տանջանք... Այս դրութիւնը անտանելի է մարդու համար. մարդը չի կարող այս հոգեկան երկպառակութեանը երկար դիմանալ և, այդ պատճառով, անդադար աշխատում է՝ համաձայնութիւն կայացնել խղճի և անասնական էակի գործունէութեան մէջ։ Երկու միջոցով մարդ կարող է խղճի տանջանքից ազատուել. 1) իւր ներքին, անասնական գործողութիւնները և ձգտումները համաձայնեցնելով խղճի պահանջմունքների հետ (սրան Տոլստոյ անւանում է нравственное просвѣщеніе) և 2) պահելով, թաքցնելով իրանից՝ խղճի տանջանքները,—ապրելու, կեանքը շարունակելու նպատակով։ Մարդոց ամբողջ կեանքը այդ երկու գործողութիւններից է բաղկացած. ոմանք աշխատում են իրանց կեանքը և գործերը համաձայնեցնել խղճի հետ, աշխատում են միշտ հետևել խղճի ձայնին. իսկ ոմանք էլ, ընդհակառակ՝ խղճի տանջանքներից ազատուելու համար աշխատում են մոռանալ խիղճը, աշխատում են իրանք իրանց հաւատաց-

նել, որ իրանց կատարած գործերը բոլորովին արդար և համաձայն են մեր խղճի պահանջներին, կամ թէ չէ՝ ուղղակի աշխատում են խլացնել, մեռցնել իրանց մէջ խղճի ձայնը... Ահա այս վերջին տեսակի մարդիկ որոնց մէջ խղճի գործունէութիւնը սաստիկ ուժեղ է, որոնք չեն կարողանում հասարակ միջոցներով դադարեցնել իրանց խղճի խայթը, ահա այս տեսակ մարդիկ Լ. Տոլստոյի կարծիքով դիմում են հարբեցողութեան, այսինքն, արհեստական միջոցով թունաւորում են խղճի գործարանի,—ուղեղը, որպէս զի չը զգան նորա տանջանքները, որպէս զի կարողանան, այդ մոռացութեան մէջ՝ շարունակել իրանց կեանքը։ Սակայն ընթերցողը չը կարծէ թէ՝ Լ. Տոլստոյ այստեղ խօսում է «արբեցողների» մասին, ինչպէս որ ընդունած է հասկանալ այդ խօսքը.—ոչ, одурманиваться—նշանակում է՝ ենթարկուել որ և է խմիչքի, կամ ծխախոտի թմբաքուի աղդեցութեանը, թէ կուզ որքան էլ թոյլ և աննկատելի լինի այդ աղդեցութեանը։ Օրինակ՝ ծխախոտի գործածութեան նպատակը՝ իւր տեսակէտից՝ բացատրելու համար, Տոլստոյ երկար օրինակներ է բերում կեանքից՝ թէ առօրեայ սովորութիւնների և թէ բացառիկ դէպքերի վերաբերեալ։ Նա ուզում է ապացուցանել, որ մարդիկ՝ ծխախոտին դիմում են այն ժամանակ, երբ զգում են որ և իցէ ներքին, հոգեկան տանջանք, ներքին անհամաձայնութիւն,—երբ ուզում են խլացնել իրանց խղճի ձայնը, որ բողոքում է նրանց վատ արարքների դէմ։ Նորա „Крейцерова Соната“ վէպի մէջ՝ հերոսը—Պոզդնիշով՝ իւր կնոջը սպանելուց յետոյ՝ գնում է իւր առանձնասենեակը և... ծխում է։ Գինու, օղիի և այլ խմիչքների գործածութեան մասին նոյնպէս շատ հետաքրքիր օրինակներ է բերում Տոլստոյ։ Նա պատմում է թէ՝ ինչպէս մի խոհարար, որ ուզեցել է սպանել իւր տիրուհուն, չի կարողացել այդ գործը կատարել, մինչև որ խմել է երկու բաժակ օղի։ Օղիի ազդեցութեան տակ՝ խոհարարը սպանել է իւր տիրուհուն։ „Трезвому совѣстно“!—լսել է մի անգամ Տոլստոյ ժողովրդի բերանից և այդ խօսքերի մէջ գտնում է այն գլխաւոր պատճառը, որ մարդիկ դիմում են արբեցուցիչ միջոցների։ Պատերազմի ժամանակ,—ասում է Տոլստոյ,—երբ զինուորները սրերով պիտի կռուեն, միշտ նրանց հարբեցնում են. Սևաստապոլի պատերազմին՝ ֆրանսիացոց զինուորները բոլորը հարբած էին։ Գինու, օղիի և ծխախոտի գործածութիւնը շատ նպաստում է կռանց բարոյապէս ընկնելուն։ Երեխաները, համարեա միշտ՝ ծխել սկսում են այն ժամանակ՝ երբ նրանք կորցնում են երեխայական անմեղութիւնը. Այս տեսակ բազմաթիւ օրինակներով՝ Տոլստոյ աշխատում է ապացուցանել իւր միտքը, ուզում է ցոյց տալ, որ գինին, արաղը, ծխախոտը և այլն՝ այն տեսակ միջոցներ են, որոնցով մարդիկ կարողանում են թմրեցնել, խլացնել իրանց խիղճը, որպէս զի նա չբողոքէ մարդկային թերութիւնների և անիրաւ գործերի դէմ...

III

Ամենից շատ նշանակութիւն է տալիս Տոլստոյ՝ գինու, արաղի և մանաւանդ, ծխախոտի առօրեայ, չափաւոր գործածութեանը, որ սաստիկ տարածւած է այժմեան հասարակութեան մէջ՝ իբրև մի սովորութիւն, իբրև մի հասարակ և անվնաս պիտոյք։ Եւ որովհետև՝ թէ խմելը և թէ ծխելը՝ մեռցնում, խլացնում են մարդու մէջ խիղճը,—ուրեմն, ինչ սարսափելի հետևանքներ կարող է ունենալ այդ,—հարցնում է Տոլստոյ։ Եւ մանաւանդ՝ պէտք է աչքի առաջ ունենալ, որ այդ չափաւոր խմելու և ծխելու սովորութիւնը մեծ մասամբ տարածւած է կրթւած, ինտելիդենտ կոչւած դասակարգի մէջ, այն դասակարգի, որ առաջնորդող է հասարակական կեանքի բոլոր ասպարէզներում։ Ուրեմն դուրս է գալիս, որ հասարակական բոլոր գործերի ղեկավարները, մեծ մասամբ՝ դառնում են խմիչքի, կամ թամբաքի քնեցնող, հարբեցնող, թմրեցնող ազդեցութեան տակ,—թէ քաղաքական, թէ պաշտօնական, թէ գիտական և թէ գրականական ասպարէզներում՝ Տոլստոյի ասելով՝ գործում են անառողջ, թմրած, հարբած մարդիկ... իւր յօդւածի վերջը հետևեալ խորհրդածութիւնն է անում Տոլստոյ։

«Ահա ամբողջ տասնեակ տարիներ է, որ Եւրոպայի բոլոր ազգերը զբաղւած են նրանով, թէ ինչպէս մարդասպանութեան ամենալաւ միջոցներ հնարել և ինչպէս բոլոր հասակն առած եիիտասարդներին՝ մարդասպանութիւն սովորցնել։ Ամենքը գիտեն, որ բարբարոսների յարձակումը երբէք չի կարող տեղի ունենալ, որ այդ՝ եւրոպական քաղաքակիրթ և քրիստոնեայ ազգութիւնների բոլոր սպանութեան պատրաստութիւնները՝ միմեանց դէմ են ուղղւած։ Ամենքը գիտեն, որ այդ ծանր է, ցաւալի է, անլարմար է, աւերիչ է, անբարոյականութիւն է, անաստւածութիւն է, յիմարութիւն է,—և ամենքը պատրաստւում են միմեանց սպանելու, ոմանք զանազան քաղաքական կոմբինացիաներ են անում՝ թէ ովքեր միասին պիտի միանան և ում սպանեն, ոմանք առաջնորդում են սպանութեան պատրաստողներին, միւսներն էլ՝ հակառակ իրանց կամքի, հակառակ խղճի, հակառակ առողջ դատողութեան՝ ենթարկւում են այդ սպանութեան պատրաստութիւններին։ Մի թէ լուրջ, առողջ դատողութեան տէր մարդիկ՝ կանչին այդ բանը։ Միայն հարբած և հարբածութիւնից երբէք աչք չը բացած մարդիկ ընդունակ են այդ բանը անելու, միայն նրանք ընդունակ են ապրելու՝ կեանքի և խղճի այդ զարհուրելի հակասութիւնների մէջ, ինչպէս որ ապրում են միւս ամեն կողմով էլ՝ մեր աշխարհի մարդիկ»։

Սառնասիրտ ընթերցողը գուցէ ժպտալ այս բոլորը կարդալուց յետոյ... ի հարկէ՝ Տոլստոյի այդ միակողմանի չափազանցութիւնները կարող են շատերի դէմքին ժպիտ յարուցանել։ Այո։ Բայց միւս կողմից՝ որքան խորը, դրամատիկական տարր կայ նորա հանճարեղ մոլորութիւնների

մէջ, Ի՞նչ է որոնում և ինչ է ուզում Տոլստոյ։ Ինչի՞ նա՝ թողած մի կողմ իւր ահագին գեղարուեստական տաղանդը, թողած աշխարհի բոլոր վայելքները, բոլոր շլացուցիչ փառքը և պատիւը՝ հովւական գաւազանը ձեռքին՝ քարոզի պաշտօն է կատարում ժողովրդի մէջ, Ի՞նչն է նրան սիպողը՝ խորասուզուել զուտ բարոյական խնդիրների մէջ, մոլորուել, խճճուել, հակասութիւններ անել...

Այդ բոլորի պատճառը՝ նորա խորը, զգայուն և մարդասէր սիրտն է։ Այդ սիրտն է, որ ստիպում է նրան զգալ կեանքի սարսափելի չարիքը, այդ սիրտն է, որ դրդում է նրան բողոքել՝ մարդոց անարդարութեան, անիրաւութեան դէմ, այդ սիրտն է, որ հանգիստ չի թողնում նրան, որ անդադար նրան դրդում է՝ որոնել, փնտրել մարդոց թշուառութեան պատճառները։ Տոլստոյի բարոյական ուղղութիւնը, նորա քարոզութիւնները՝— խղճի, մարդասիրութեան, եղբայրասիրութեան մասին՝ միւս կողմից ապացուցանում են թէ՝ որքան մոռացած են այժմեան հասարակութեան մէջ այն նշանաւոր «խօսքերը»—խիղճ, ազնուութիւն, եղբայրասիրութիւն, հայրենասիրութիւն և այլն,—որոնք, իբրև կտակ՝ աւանդեց իւր հայրենակիցներին Շչէդրին երգիծաբանը։